Արտատպված է՝ Շոլոմ-Ալեյխեմ, Վիպակներ և պատմվածքներ, Ե., Հայպետհրատ, 1964: Ռուսերենից թարգմանեց՝ Օլգա Սանահյանը:

ԵԹԵ ՌՈՏՇԻԼԴԸ ԼԻՆԵԻ

(Կասրիլովկայի մելամեդի մենախոսությունը)

— Եթե Ռոտշիլդը լինեի՜...— երազեց Կասրիլովկայի մելամեդը մի հինգշաբթի, երբ կինը փող պահանջեց շաբաթ օրվա համար պատրաստություն տեսնելու, իսկ նրա մոտ այդպիսին չգտնվեց:— Ա՜խ, եթե Ռոտշիլդը լինեի, գուշակեցեք, թե ի՞նչ կանեի: Առաջին հերթին՝ սովորություն կդարձնեի, որ կինս իրեն մոտ միշտ մի երքանոց ունենար, որ ամեն անգամ երբ ցանկալի հինգշաբթին գար, զահլաս չտաներ, թե շաբաթ օրվա համար փող չունի[1]... Երկրորդ՝... ետ կգնեի գրավ դրված շաբաթօրյա արխալուղս... Բայց ոչ: Կնոջս կատվի մորթուց բուռնուսը, թող անվերջ չասի՜, թե մրսում է: Հետո ես գնում եմ այս ամբողջ տունը՝ իր բոլոր երեք սենյակներով, ամբարով, մառանով, ցախանոցով, ձեղնահարկով և իր ամեն տեսակի խառախուռայով. Թող կինը չասի, թե նեղվածք է: Ահա՝ քեզ երկու սենյակ. քեզ համար եփիր, թափիր, լվացք արա, կաղամբ փրթի, արա ինչ-որ քեֆդ ուզում է, իսկ ինձ հանգիստ թող, որ կարողանամ թարմ գլխով պարապել աշակերտներիս հետ: Ապրուստ վաստակելու հոգսը չկա, հարկ չկա մտածելու, թե շաբաթ օրվա համար որտեղից փող ճարես, մի խոսքով երանությո՛ւն, ուրիշ ոչինչ: Աղջիկներիս բոլորին մարդու եմ տալիս— ուսերիցդ գցիր բեռը: Էլ ի՞նչ է պետք: Եվ ահա ես սկսում եմ մտածել քաղաքի գործերի մասին:

Նախ և առաջ, հին սինագոգին մի նոր տանիք եմ պարգևում, թող այլևս գլուխների վրա չկաթի, երբ մարդիկ աղոթք են անում: Բաղնիսը, թող կողքին հիշված չլինի, քանդում եմ ու նորից եմ շինում, որովհետև այսօր թե վաղը, աստված փրկի ազատի, փորձանք կպատահի և հակառակի նման էլ գուցե հենց այն օրը, երբ կնանիքն են լողանում: Իսկ եթե բաղնիք ասացինք, ապա աղքատանոցը վաղուց պետք է քանդել և նրա տեղը հիվանդանոց սարքել, հենց իսկական հիվանդանոց— մահճակալներով, բժիշկով, դեղորայքով, արգանակով, որ ամեն օր խմեին, ինչպես որ ընդունված է կանոնավոր քաղաքներում: Հետո ես ծերերի համար օթևան եմ սարքում, որպեսզի թալմուդ իմացող ծերուկները քարշ չգային եկեղեցու վառարանի ետևում: Ստեղծում եմ ընկերություն— «Հագուստը՝ տկլորներին», որպեսզի աղքատների երեխաները չվազվզեին, ներեցեք արտահայտությանս, պորտները բաց և բարեգործական փոխօգնության ընկերություն: Որպեսզի մարդ, լինի նա մելամեդ թե արհեստավոր կամ թեկուզ առևտրական, տոկոսներ չվճարեր, վերջին շապիկը գրավ չդներ, հետո կհիմնեի «Հարսնախնամ» ընկերություն, որպեսզի տանը մնացած աղքատ աղջիկներին ոնց որ կարգն էր զուգեին, զարդարեին ու մարդու տային, և դրա նման այլ և այլ ընկերություններ կհիմնեի Կասրիլովկայում... Բայց ինչո՞ւ միայն Կասրիլովկայում: Ամեն տեղ, որտեղ ապրում են մեր ախպեր հրեաները, ամենուրեք, աշխարհով մեկ:

Իսկ կարգ ու կանոնի համար, որպեսզի ամեն բան կատարվեր ճշտորեն, գիտե՞ք ես ինչ եմ անում, այդ բոլոր ընկերություններից վեր, հիմնում եմ մի մեծ բարեգործական ընկերություն, որը հսկում է մնացած բոլոր ընկերություններին, հոգում է բոլոր հրեաների մասին, այսինքն՝ ամբողջ ժողովրդի մասին, որպեսզի մարդիկ ամեն տեղ ապրեին համերաշխ, ուսումնասիրեին աստվածաշունչը՝ Բաշիի[2] բացատրականով, թալմուդը՝ ծանոթագրություններով, լրացումներով և մնացած բոլոր

---

[1] Հրեական կրոնական օրենքով արգելվում էր շաբաթ օրը (հանգստյան օր) կրակ անել և ճաշ եփել, ուստի ուրբաթ օրն էին շաբաթ օրվա համար ճաշ պատրաստում:

[2] Բաշի — աստվածաշնչի և թալմուդի նշանավոր տեսաբան Սողոմոն Իցխակի (1040—1105) անվան սկզբնատառերը:

իմաստնություններով, ինչպես և բոլոր յոթ գիտություններն ու յոթանասուն լեզուները[3]: Իսկ այդ բոլոր էշիբոտների[4] գլխին լինում է մի գերագույն էշիբոտ՝ հրեից ակադեմիան, Վիլնոյում հավանաբար... Այստեղից դուրս կգային աշխարհի մեծագույն գիտնականներն ու իմաստունները, և այդ ամենը՝ ձրի, «հարուստի հաշվին», այսինքն՝ իմ, և որպեսզի ամեն բան կատարվեր ըստ պլանի, ըստ կարգի, որպեսզի չլիներ ոչ մի «Դու՝ ինձ, ես՝ քեզ, առ ու փախ», թող ամենքն էլ միայն մի հոգս ունենային— ընդհանուրի բարեկեցությունը:...Իսկ ի՞նչ է հարկավոր, որպեսզի մարդիկ մտածեին ընդհանուրի բարեկեցության մասին: Այդ բանի համար հարկավոր կլիներ ամեն մեկին ապահովել առանձին-առանձին: Իսկ ինչով ապահովել: Պարզ է՝ ապրուստով: Որովհետև, գիտե՞ք ինչ, դա ամենից գլխավորն է: Չկա ապրուստ, չկա համերաշխություն: Մի կտոր հացի համար, թող ների աստված, մարդիկ պատրաստ են միմյանց կործանել, մորթել, թունավորել, կախել... Նույնիսկ մեր թշնամիները, ամբողջ աշխարհի մեր բոլոր չարակամները, ի՞նչ եք կարծում, մեզանից ի՞նչ են ուզում: Ոչինչ: Բոլորը ապրուստի համար է: Եթե նրանց գործը լավ գնար, քան գնում է, նրանք իսկի էլ այսպես չէին գազազի: Ապրուստի ետևից ընկնելն է նրանց նախանձ դարձնում, նախանձը առաջ է բերում թշնամություն, իսկ այստեղից էլ ծնվում են, աստված թող կարոտ պահի, բոլոր թշվառությունները, բոլոր դառնությունները, հետապնդումները, սպանությունները, վայրագությունները, պատերազմները...

Ա՛խ պատերա՛զմը, պատերա՛զմը... Դա, ասեմ ես ձեզ, փորձանք է ամբողջ աշխարհի համար: Եթե Ռոտշիլդը լինեի, մեկընդմիշտ վերջ կտայի պատերազմներին:

Դուք երևի կհարցնեք, թե այդ ինչպես: Միմիայն փողի օգնությամբ: Այսի՞նքն: Հիմա ինչպես հարկն է կբացատրեմ:

Խոսքի օրինակ, երկու պետություն վեճ ունեն ինչ-որ դատարկ բաների համար, ինչ-որ մի կտոր հողի համար, որը մի պտղունց բռնոթի էլ չարժի: Նրանց մոտ այդ կոչվում է «տերիտորիա»: Պետություններից մեկն ասում է, որ այդ տերիտորիան պատկանում է իրեն, իսկ մյուսը հայտարարում է՝ «Ո՛չ, դա իմ տերիտորիան է»: Հենց այն, ոնց ասում են՝ աշխարհի արարչություն օրից, տեր աստված այդ հողը արարչագործել է հենց իրեն համար: Բայց այդ ժամանակ գալիս է երրորդ պետությունը և ասում է. «Դուք երկուսդ էլ ավանակ եք: Այդ տերիտորիան պատկանում է բոլորին, դա այսպես ասած, «հանրային սեփականություն է»... Մի խոսքով, տերիտորիա՝ այսպես, տերիտորիա՝ այնպես, տերիտորիա են խաղում այնքան ժամանակ, մինչև որ սկսում են կրակել հրացաններից ու թնդանոթներից, մարդիկ մորթոտում են միմյանց գառների նման, արյունը հոսում է ջրի պես:

Բայց պատկերացրեք ձեզ, որ ես հենց սկզբից և եթե հանդես եմ գալիս և ասում. «Հանդարտվեցե՛ք, եղբայրներ, թույլ տվեք մի բան ասել: Իսկապես, այդ ինչի՞ համար եք վիճում: Կարծում եք մենք չե՞նք հասկանում, թե դուք ինչ եք ուզում: Ախր, ձեզ հարկավոր է ոչ թե դատարկ-մատարկ խոսակցություն, այլ գալուշկա[5]: Տերիտորիան ախր միայն պատճառ է: Իսկ գլխավորը ձեզ համար հենց այդ ոչ ու փուչ «կոնտրիբուցիան է»: Եվ եթե հարցը վերաբերում է կոնտրիբուցիային, այդ դեպքում փողի համար ո՞ւմ դիմենք: Հենց ինձ՝ Ռոտշիլդին այսինքն: Իսկ ես նրանց ասում եմ. «Գիտես ինչ, ահա, ա՛ռ քեզ մեկ միլիարդ, վանդականախշ տաբատով լոլոզ անգլիացի: Ահա քեզ մեկ միլիարդ, կարմիր ֆեսով դմբո թուրք: Ահա քեզ էլ մեկ միլիարդ, մորքուր Ռեյզա[6]: Բանն ինչո՞ւմն է: Աստված կօգնի, կվճարեք ոչ մեծ տոկոսով, տերը փրկի ազատի, ասենք մի չորս-հինգ տարում, ձեզնով հարստություն կուտակելու մտադրություն չունեմ»:

Հասկացա՞ք: Ես կատարեցի իմ գործը և մարդիկ դադարեցին անմեղ տեղը անասունի նման միմյանց կոտորելուց: Իսկ եթե պատերազմների քոքը կտրվեց, այն ժամանակ Է՛լ ինչի՞ պետք է զենքը, զորքը, այդ ամբողջ հարայ-հրոցը, ժամանակի անտեղի կորուստը: Ո՛չ մի բանի: Իսկ եթե

---

[3] Յոթ գիտություններն ու յոթանասուն լեզուները — ըստ Թալմուդի գոյություն ունի յոթ գիտություն և յոթանասուն լեզու:
[4] Բարձրագույն ուսումնական հաստատություն:
[5] Կտրտած խմոր, որ գցում են սուպի կամ կաթի մեջ. ուկրաինական ազգային կերակուր:
[6] Մորքուր Ռեյզյա - Ռուսաստան:

զորք չկա, հարայ-հրոց չկա, ուրեմն չկա և թշնամություն, չկա նախանձ, չկա այլևս ոչ թուրք, ոչ անգլիացի, ոչ ֆրանսիացի, ոչ գնչու, ոչ հրեա, այսպես ասած՝ ամբողջ աշխարհը բոլորովին այլ կերպարանք է ստանում, ինչպես սուրբ գրքումն է ասվում. «Եւ եղեւ օրն այդ», այսինքն՝ մեսիայի գալուստը...

Հը՛, միգուցե... Եթե Ռոտշիլդը լինեի, միգուցե ընդհանրապես փողն էլ վերացնեի: Ո՛չ մի փող: Որովհետև, եկեք մեզ չխաբենք, ի՞նչ բան է փողը: Դա, ախր, որ ճիշտն ասելու լինենք, պայմանավորվածության հարց է, ինքնախաբեություն, ուրիշ ոչինչ... Վերցրել են մի կտոր թուղթ, վրան պատկեր նկարել և գրել՝ «Երեք ռուբլի արծաթով»: Փողը, ասում եմ ձեզ, միայն գայթակղություն է, կիրք, ամենակործանիչ կրքերից մեկը... Բոլորն ընկած են նրա ետևից, և ոչ ոք էլ այն չունի: Իսկ եթե աշխարհում փող ասածդ գոյություն չունենար, մոլորեցնող սատանային գործ չէր մնա անելու և հենց այդ կրքից էլ ոչինչ չէր մնա: Հասկանո՞ւմ եք, թե չեք հասկանում:

Ճիշտ է, հարց է առաջանում, թե հապա մարդիկ փող որտեղի՞ց կճարեին շաբաթ օրվա համար: Բայց ներեցեք, հապա ե՞ս որտեղից ճարեմ շաբաթ օրվա համար...